Արձանագրություն N 3

<<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/8>> ծածկագրով ԳՀ ընթացակարգով հայտարարված գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Ծաղկաձոր

16 հուլիս 2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Գ.Հայրապետյան
անդամներ՝ Ա.Մեսրոպյան
Վ.Հայրապետյան
Ն.Խաչատրյան
Հ.Բաբախանյան
քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանության շտկման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ **<<Մանուկյան Շին>> ՍՊԸ-ի, <<Երվադա>> ՍՊԸ-ի և <<ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ>> ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամին և սահմանված կարգով շտկվել են <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/8>> ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերի անհամապատասխանությունները:

<<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել բացակայող փաստաթուղթը:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ <<Ավետիսյան Շին Մոնտաժ>> ՍՊԸ-ի հայտը մերժել, մյուս մասնակիցները հայտերը գնահատել՝ բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/8>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին

2.1 <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-21/8>> ծածկագրով մրցույթը հայտարարվել էր ''Գնումների մասին'' օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, ուստի ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի

04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով, բավարար գնահատված Ընկերությունների ներկայացուցիչները հրավիրվում են **գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների 20.07.2021թ. ժամը 11:00-ին:** Բանակցությունների վարման ժամկետ է սահմանվում 30 րոպե: Բանակցությունները տեղի կունենան ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9՝ Ծաղկաձորի համայնքապետարանի շենք հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամի անունը,ազգանունը	**Ստորագրությունը**
Նախագահ՝ Գ.Հայրապետյան	
Անդամներ՝ Ա.Մեսրոպյան	
Վ.Հայրապետյան	
Ն.Խաչատրյան	
Հ.Բաբախանյան	
Քարտուղար՝ Ա.Ավետիսյան	